

Գործազրկության կառուցվածքի փոփոխությունները 2014-2022 թթ.

Մխիթարյան Խորեն Ա.
տ.գ.թ., ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ (Երևան, ՀՀ)
prof_mkhitaryan@yahoo.com

Կիրակոսյան Էրիկա Կ.
ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)
erika.kirakosyan96@mail.ru

ՀՏԳ 331.56; EDN: OCXTON; JEL: E24, J64, J65, H75, I24

Հանգուցաբառեր՝ գործազուրկներ, սեռ, տախքային խումբ, կրթական մակարդակ, բնակավայր, աշխատանքային փորձ, աշխատանք փնտրելու տևողություն

Изменение структуры безработицы в 2014-2022 гг.

Мхитарян Хорен А.
к.э.н., доцент кафедры Менеджмента АГЭУ (Ереван, РА)
prof_mkhitaryan@yahoo.com

Киракосян Эрика К.
Аспирант кафедры Менеджмента АГЭУ (Ереван, РА)
erika.kirakosyan96@mail.ru

Аннотация. Обеспечение высоких темпов развития является важным вопросом для экономики Республики Армения, а одним из основных факторов, непосредственно влияющих на экономическое развитие, является эффективное использование трудового потенциала. Как и в странах с переходной экономикой, на рынке труда РА существует ряд проблем, в том числе низкая заработная плата, высокая безработица, скрытая занятость, неравномерность развития рынка труда и экономики по регионам, неравенство в оплате труда. Анализ многих макроэкономических показателей связан с определенными трудностями. Трудности в основном связаны с проблемами в области статистики, которые вызывают серьезные вопросы при анализе показателей, характеризующих как демографические, так и занятость рабочей силы. Проблема заключается в том, что отсутствие точных статистических показателей в вышеупомянутых областях напрямую влияет на качество и достоверность анализов, а следовательно, и на степень реалистичности выводов и рекомендаций, представленных в результате этих анализов. Однако имеющиеся данные дают нам определенную картину изучаемых явлений. Которые в дальнейшем помогают проводить анализ, разрабатывать ряд программ, принимать законы и т.д. В статье представлены 2014-2022 годы. комплексный охват показателей безработицы, благодаря чему становится заметной текущая картина в нашей республике.

Ключевые слова: безработный, пол, этническая группа, уровень образования, место жительства, стаж работы, продолжительность поиска работы

Changes in the structure of unemployment in 2014-2022

Mkhitaryan Khoren A.
Candidate of Economic Sciences, Associate Professor of the Chair of Management of ASUE (Yerevan, RA)
prof_mkhitaryan@yahoo.com

Kirakosyan Erika K.
Postgraduate student of the Department of Management ASUE (Yerevan, RA)
erika.kirakosyan96@mail.ru


Abstract. Ensuring high rates of development is an important issue for the economy of the Republic of Armenia, and one of the main factors directly affecting economic development is the effective use of labor potential. As in countries with transition economies, there are a number of problems in the RA labor market, including low wages, high unemployment, hidden employment, uneven development of the labor market and economy by region, and wage inequality.

The analysis of many macroeconomic indicators is associated with certain difficulties. The difficulties are mainly related to problems in the field of statistics, which give rise to serious questions during the analyzes of indicators characterizing both demographic and labor force employment. The problem lies in the fact that the lack of accurate statistical indicators in the aforementioned fields directly affects the quality and credibility of the analyses, and therefore also the degree of realism of the conclusions and recommendations presented as a result of these analyses. However, the available data give us a certain picture for the phenomena under study. Which further help to perform analysis, develop a number of programs, adopt laws, etc. The article presents 2014-2022. the comprehensive coverage of unemployment indicators, thanks to which the current picture in our republic becomes prominent.

Keywords: unemployed, gender, ethnic group, educational level, place of residence, work experience, duration of job search

Ըստ տնային տնտեսություններում ՀՀ վիճակագրական կոմիտեի աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների, գործազրկության իրական մակարդակը ՀՀ-ում հաշվարկված Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության հիման վրա, 2018 թ. կազմել է 19% , իսկ հետո նվազել է


և 2019 թ. կազմել է 18.3%, 2020 թ.-ին՝ 18,2%, այնուհետև շարունակելով պահպանել նվազման միտումը 2021 թ. կազմել է 15,5%, իսկ 2022 թ. 2,5 տոկոսային կետով նվազել է և կազմել 13% [1; էջ 100]: Նշենք նաև, որ 2022 թ.-ի տվյալները համարվում են նախնական տվյալներ:



Քձապատկեր 1. Գործազրկության մակարդակը ՀՀ-ում 2014-2022 թթ., %

Գործազրկության մակարդակը 2014-2022 թթ. ունեցել է միջինը՝ 17,32% արժեք, արձա-

նագրելով 2018 թ.-ին ամենաբարձր, իսկ 2022 թ.-ին ամենացածր արդյունքները:




Քձապատկեր 2. Գործազուրկների և զբաղվածների թվաքանակը, հազար մարդ

Ինչպես երևում է զձապատկերից 2016-2017 թթ. նվազել են ինչպես զբաղվածների, այնպես էլ գործազուրկների թիվը: Այսպես, 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ զբաղվածների թիվը աճել է 3.6%-ով՝ կազմելով 1048.5 հազար մարդ, գործազուրկների թիվը աճել է 12.1%-ով՝ կազմելով 245.4 հազար մարդ: 2019 թ.-ին 2018 թ.-ի համեմատ գործազուրկների թիվը նվազել է 5.8%-ով՝ կազմելով 220.5 հազար մարդ [1; էջ 99]: 2020 թ.-ին 2019 թ.-ի համեմատ նվազել է և՛ զբաղվածների, և՛ գործազուրկների թվաքանակը, համապատասխանաբար 2.3 և 2.7%-ով: Այս

ցուցանիշը մեր երկրում կարող է բնութագրվել ինչպես արտագնա աշատանքի մեկնողների, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում Քովիդ-19-ը համավարակի ի հայտ գալու պատճառներով: Սակայն 2022 թ.-ի նախնական տվյալները փաստում են, որ 2022 թ.-ին 2021 թ.-ի նկատմամբ պատկերը այլ է: Զբաղվածների թիվը աճել է 4.7%-ով, իսկ գործազուրկների թիվը նվազել է 14.5%-ով:

Այժմ ներկայացնենք գործազուրկների թիվն՝ ըստ սեռի:




Պճապատկեր 3. *Գործազուրկների բաշխումը ըստ սեռի, հազար մարդ*

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 3-ը, սկսած 2015 թ.-ից գործազուրկ կանանց թիվը ունի նվազման միտում: Միևնույն ժամանակ, 2015 թ.-ի հետ համեմատած՝ 2016 թ.-ին գործազուրկ տղամարդկանց թիվը նվազել է 2.9%-ով կազմելով 116.9 հազար մարդ, իսկ 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ աճել է 12.3%-ով կազմելով 130.8 հազար մարդ: 2021 թ.ին 2020 թ.-ի նկատմամբ նվազել է և՛ կին, և՛ տղամարդ գործազուրկների թվաքանակը, համապատասխանաբար 12.6 և 16.9%-ով: Ընդհանուր առմամբ 2021 թվականին 199 հազար գործազուրկների թվաքանակում 55.6%-ը տղամարդիկ են եղել, իսկ 44.4%-ը կանայք [2]:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների շրջանում առկա է գործազրկության բարձր մակարդակ:

Երիտասարդների շրջանում գործազրկությունը մնացած բոլոր տեսակի գործազրկությունների համեմատ վտանգավոր է մի շարք ասպեկտներով: Պատճառն այն է, որ ի տարբերություն մյուս տարիքային խմբերի, երիտասարդները կենսափորձի պակասի հետևանքով, աշխատանք որոնելու մի քանի անհաջող փորձերից հետո, ավելի հաճախ համարում է այսպես կոչված հուսահատ գործազուրկների բանակը, որն էլ իր հերթին լի է բացասական հետևանքներով:



Պճապատկեր 4. *Գործազուրկների թիվն ըստ տարիքային խմբերի, հազար մարդ*


Գծապատկերից երևում է, որ գործազուրկների թիվը 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ ավելացել է գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ՝ 20-24, 65-69 և 70-75 տարիքային խմբերի, որտեղ տեղի է ունեցել գործազուրկների թվի նվազում: Օրինակ, 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ 20-24 տարիքային խմբում գործազուրկների թիվը նվազել է 7.1%-ով:

2021 թ.-ին 15-29 տարեկան գործազուրկների թիվը կազմել է 60,2 հազար մարդ, ընդ որում 30,4 հազարը 15-24 տարիքային խմբի, իսկ 29,8 հազարը 25-29 տարիքային խմբի համար: Համեմատության համար նշենք, որ 2020 թ.-ին 15-29 տարեկան գործազուրկների թիվը կազմել է 66,4 հազար մարդ, ընդ որում 36 հազարը 15-24 տարիքային խմբի, իսկ 30,4 հազար 25-29 տարիքային խմբի համար [3]:

Տվյալները փաստում են, որ 2021 թ.-ին ՀՀ-ում գործազուրկների 30,2%-ը այսինքն՝ 60,2 հազար մարդ երիտասարդներ են: Սակայն այս ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ ունեցել է նվազման միտում: Երիտասարդ գործազուրկների թիվը 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ նվազել է 9,3 % -ով:

Գործազրկության բնութագրման համար կարևորվում է գործազուրկների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի:

Ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների գործազուրկների կրթական կառուցվածքի վերլուծությունը վկայում է այն մասին, որ վերջին տասնամյակի ընթացքում բարձրացել է գործազուրկների կրթական մակարդակը:



Գծապատկեր 5. Գործազուրկների թիվն ըստ կրթական մակարդակի, հազար մարդ

Ինչպես երևում է 2014-2021 թթ. գործազուրկների թվաքանակի մեջ գերակշիռ մաս են կազմում միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները: Ընդ որում, 2021 թ.-ին նրանց թիվը գործազուրկների ընդհանուր թվաքանակում կազմել է 42% (83,5 հազար մարդ): 2014 թ.-ին գործազուրկների թվաքանակի մեջ բավականին բարձր է կազմել բարձրագույն կրթություն ունեցողների թիվը և կազմել է 74.8 հազար մարդ: 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ նվազել է միայն բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների թիվը: Բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների թիվը 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ նվազել է 8.9%-ով՝ կազմելով 59.5 հազար մարդ:

2021 թ.-ն 2020 թ.-ի նկատմամբ գործազուրկների թվաքանակը բոլոր կրթական մա-

կարդակներում նվազման միտում է արձանագրել: Այսպես՝ բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների թիվը նվազել է 10,1%-ով, միջին մասնագիտականը՝ 17,9%-ով, նախամասնագիտականը՝ 8,3%-ով, միջնակարգը՝ 11,2%-ով, հիմնականը՝ 62,1%-ով ու տարրական և ցածրը՝ 50%-ով:


Վերջին տարիների ընթացքում տնտեսական սթրեսի պատճառով աղքատության մակարդակը բարձրացել է: Ի պատասխան, Կառավարությունը ձգտում էր մեծացնել ծախսերը աշխատատեղեր ստեղծելու համար: Հայաստանի Հանրապետությունում աշխատողները ընդհանուր առմամբ, լավ կրթված են և երեք աշխատողներից մեկը ունի բարձրագույն կրթություն: Հայաստանի կրթական համակարգի կառուցվածքը այնպիսին է, որ երիտասարդների

մեծամասնությունը (մոտ 90%-ը) ուսման ընթացքում աշխատանքային փորձ ձեռք չեն բերում: Սա ավելի է դժվարացնում և երկարացնում դեպի աշխատաշուկա անցումային գործընթացը և նպաստում է շրջանավարտների գործազրկության բարձր մակարդակին: Այնուամենայնիվ, տարածաշրջանի մյուս երկրների հետ համեմատ հայ ձեռներեցները կրթության ավելի բարձր մակարդակի են հասնում, շատերը հետդիպլոմային աստիճաններ ունեն և

ներգրավվում են նորարարության գործունեությունների ավելի բարձր մակարդակներում [4]:

Հանրապետությունում գործազուրկների աշխատանքի տեղավորման խնդրում կան լուրջ դժվարություններ:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկային բնորոշ է երկարաժամկետ գործազրկությունը այսինքն՝ մեկ տարի և ավել ժամանակով գործազրկության մեջ գտնվող անձանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում:




Գծապատկեր 6. Գործազուրկների թիվն ըստ աշխատանք փնտրելու տևողության, հազար մարդ

2016 թ.-ին գործազուրկների 16.6%-ը աշխատանք է փնտրել մինչև 3 ամիս, 24.6 %-ը աշխատանք է փնտրել 3-12 ամիս, 21.1%-ը՝ 1-2 տարի, 21.7 %-ը՝ 2-4 տարի, իսկ 16%-ը՝ 4 և ավելի տարի: 2017 թ.-ին աշխատանք է փնտրել մինչև 3 ամիս գործազուրկների 18.3%-ը, 25.8%-ը աշխատանք է փնտրել 3-12 ամիս, 18.4 %-ը՝ 1-2 տարի, 19.5%-ը՝ 2-4 տարի, իսկ 18%-ը՝ 4 և ավելի տարի [5; էջ 194]:

2017 թ.-ին 2016 թ.-ի համեմատ աճել է մինչև 3 ամիս, 3-12 ամիս ու 4 և ավելի տարի աշխատանք փնտրելու տևողություն ունեցող գործազուրկների թիվը, համապատասխանաբար 9.9 ; 4.4 և 11%-ով: Իսկ 1-2, 4 և ավելի տարի տևողություն ունեցող գործազուրկների թիվը նվազել է, համապատասխանաբար 13,1 և 10,7 %-ով: Ինչպես տեսնում ենք 2016 թ.-ին 4 և ավելի տարի աշխատանք փնտրողների թիվը բավականին նվազել է, ինչը դրական երևույթ է, քանի որ 4 և ավելի տարի աշխատանք փնտրողները դառնում են լճացած գործազուրկներ:

Նշենք, որ 2018-2021 թթ.-ի համար ներկայացված է արդեն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը ըստ աշխատանք փնտրելու տևողության: 2019 թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել է մինչև 3 ամիս աշխատանք փնտրողների թիվը, նույն երևույթը ակա է նաև 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ, համապատասխանաբար 1,9 և 2,8 տոկոսային կետով: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում գերակշռում է 3 և ավելի տարի աշխատանք փնտրողների թիվը, որը 2020 թ.-ին կազել է 49,0% [6; էջ 107], իսկ 2021 թ.-ին՝ 46,3% [7; էջ 113]:

Ցանկացած աշխատանքի ընդունվելու համար մեզնից պահանջում են առնվազը մեկ տարվա աշխատանքային փորձ: Իսկ բարձրագույն կրթությունը նոր ավարտած շրջանավարտները, բնականաբար փորձ չունեն և դրա պատճառով էլ երկար ժամանակ չեն կարողանում տեղավորվել աշխատանքի:




Պճապատկեր 7. Գործազուրկների թիվն ըստ աշխատանքային փորձի առկայության, հազար մարդ

2019 թ.-ին աշխատանքային փորձ ունեցող գործազուրկների թիվը ընդհանուր գործազուրկների թվաքանակում կազմել է 69,8%, 2020 թ.-ին կազմել է 78,8% իսկ 2021 թ.-ին 77,4%: Աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների թիվը 2018 թ.-ից ունի նվազման միտում: 2020 թ.-

ին 2019 թ.-ի նկատմամբ նվազել է 30,3%-ով, իսկ 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ՝ 7,9%-ով:

Աշխատանքը դադարեցնելու պատճառներն լինում են տարբեր: Դրանք են՝ աշխատանքից ազատումը, ժամանակավոր գործունեության ավարտը, հիվանդությունը, ընտանեկան հանգամանքները և այլն:




Պճապատկեր 8. Գործազուրկներն ըստ աշխատանքը դադարեցնելու պատճառների

2014-2017 թթ. բարձր է եղել գործազուրկների թիվը աշխատատեղի կրճատման պատճառով, իսկ 2018-2021 թթ.՝ ժամանակավոր գործունեության ավարտի պատճառով: Աշխատատեղի կրճատման պատճառով գործազուրկ-

ների թիվը 2018 թ.-ին 2017 թ.-ի համեմատ նվազել է 57,9%-ով, իսկ ժամանակավոր գործունեության ավարտի պատճառով աճել է 2,4 անգամ:

Հայաստանի Հանրապետության մարզերում գործազրկության համեմատական վերլուծության արդյունքները վկայում են մարզերի միջև գործազրկության մակարդակի զգալի տարբերությունների մասին: Ընդ որում, այդ տարբերությունները խորանում են՝ կախված մայրաքաղաքից մարզի ունեցած հեռավորությունից:

տարբերությունների մասին: Ընդ որում, այդ տարբերությունները խորանում են՝ կախված մայրաքաղաքից մարզի ունեցած հեռավորությունից:



Պձապատկեր 9. Գործազրկության մակարդակի բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի, %

Հանրապետական միջին ցուցանիշից գործազրկության մակարդակը 2020 թ.-ին բարձր է եղել Երևանում, Լոռու, Կոտայքի, Ծիրակի,


Տավուշի, ինչպես նաև Վայոց ձորի մարզերում: 2020 թ.-ին 2019 թ.-ի նկատմամբ գործազրկության մակարդակի աճ է գրանցվել Հայաստանի

Հանրապետության ք. Երևանում (0,9 տոկոսային կետով Արագածոտնի (1,2 տոկոսային կետով), Արմավիրի (1.0 տոկոսային կետով), Գեղարքունիքի (1.1 տոկոսային կետով), Լոռու (0,6 տոկոսային կետով) մարզերում:

Ինչպես նկատում ենք 2021 թ-ին 2020 թ-ի նկատմամբ բոլոր մարզերում գործազրկության

մակարդակը ունեցել է նվազման միտում: Ամենից շատ նվազու նկատվել է Արագածոտնի և Սյունիքի (3.3 տոկոսային կետով), Վայոց ձորի (6.4 տոկոսային կետով) և Տավուշի (6.9 տոկոսային կետով) մարզերում:

Այժմ ներկայացնենք գործազուրկների թիվն՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:



Գծապատկեր 10. Գործազուրկներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, 2014-2021 թթ., հազար մարդ

Ինչպես երևում է գծապատկերից դիտարկվող ժամանակահատվածում մեծ է եղել գործազուրկների թիվն ըստ քաղաքային բնակավայրերի: 2016 թ-ին Հայաստանի Հանրապետությունում քաղաքային բնակավայրերի գործազուրկների թիվն 6.5 անգամ գերազանցել է գյուղական բնակավայրերի գործազուրկների թիվին, 2017 թ-ին՝ 4,7 անգամ, 2021 թ-ին՝ 3,2 անգամ:

2014-2021 թթ. քաղաքային գործազրկության մակարդակը ամենաբարձրը եղել է 2015 թ.-ին և կազմել է 206.9 հազար մարդ, 2016 թ.-ին նվազել է 7.8%-ով և կազմել է 190.7 հազար մարդ, իսկ 2021 թ.-ին 2015 թ.-ի համեմատ նվազել է 26,9%-ով կազմելով 151,2 հազար մարդ: 2018 թ.-ին նախորդ տարվա համեմատ գյուղական բնակավայրերի գործազուրկների թիվը աճել է 68.14%-ով և կազմել է 64,4 հազար մարդ: Այս ցուցանիշը 2021 թ-ին 2018 թ.-ի նկատմամբ նվազել է 25,6%-ով և կազմել է 47.9 հազար մարդ:

Այսպիսով՝ փորձեցինք տալ Հայաստանի Հանրապետությունում գործազրկության առկա պատկերը, որը ըստ վիճակագրական տվյալերի ունի նվազման միտում: Իհարկե այդ փաստը

ուրախալի է, քանի որ գործազրկությունը ծնում է բացասական հետևանքներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-մարտին,
2. Աշխատանքի շուկան Հայաստանում, 2022 թ.
3. ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?xid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> (մուտք 21.05.2023)
4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փաստաթուղթ, (file:///C:/Users/User/Downloads/Armenia+Country+Strategy+(Armenian)x,0.pdf) 2015 թ. էջ 32-33 (մուտք 22.05.2023)
5. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018 թ.
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021 թ.
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022 թ.

Տճանա/Հանձնվել է՝ 15.05.2023
 Рецензирована/Գրախոսվել է՝ 22.05.2023
 Принята/Ընդունվել է՝ 02.06.2023